Երևան, Հայաստան
Փետրվար 20-22, 2019 թ.

Հայաստանում կայուն անտառ-կառավարման չափորոշիչներ և ցուցանիշներ

«Հայաստանում կայուն անտառկառավարման չափորոշիչներ և ցուցանիշներ» երկրորդ ազգային աշխատաժողովի հաշվետվություն

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ՝ ԵՎԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԱՅՐ՝ ԵՐԵՎԱՆ, ՄԱԿ-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Բովանդակություն

Հապավումների ցանկ 3

1. Ներածություն 4

1.1. Հայաստանում ԿԱԿ չափորոշիչների և ցուցանիշների զարգացման գործընթացը 4

2. Հայաստանում ԿԱԿ ՉԵՑ երկրորդ ազգային աշխատաժողովի հաշվետվություն 5

3. Պրեզենտացիաներ 6

4. Համաձայնեցում և առաջնահերթությունների սահմանում խմբային աշխատանքի արդյունքները 10

5. Տեղեկատվական թերթիկների մշակում և տվյալների հավաքման մեթոդաբանություն 13

6. ԿԱԿ չափորոշիչների և ցուցանիշների վերջնական ազգային փաթեթ 16

7. Առաջիկա քայլեր և աջակցության հետագա կարիքների բացահայտում 19

Հավելված I. «Հայաստանում կայուն անտառկառավարման չափորոշիչներ և ցուցանիշներ» երկրորդ ազգային աշխատաժողովի օրակարգ 20

Հավելված II. Մասնակիցների ցանկ 22

Հապավումների ցանկ

ԱՏՀ	Աշխարհատեղեկատվական համակարգեր
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցություն ընկերություն
ԵՏՀ	Եվրոպական տնտեսական հանձնաժողով
ԿԱԿ	Կայուն անտառկառավարում
Հա	Հեկտար
ՀՁ	Հեռահար զոնդավորում
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀուՊ	Հարց ու պատասխան
ՄԱԶԾ	Միավորված ազգերի զարգացման ծրագիր
ՄԱԶՀ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման հաշիվ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՉևՑ	Չափորոշիչներ և ցուցանիշներ
ՊԳԿ	Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն

1. Ներածություն

Սույն հաշվետվությունն իր մեջ ամփոփում է 2019 թվականի փետրվարի 20-22-ին Երևանում տեղի ունեցած Հայաստանում կայուն անտառկառավարման չափորոշիչների և ցուցանիշների փաթեթի մշակման նպատակով կազմակերպված 2-րդ ազգային աշխատաժողովի արդյունքները, ինչպես նաև հաշվետվության մեջ նախանշվում է ազգային ՉԱՑ փաթեթի զարգացման գործընթացը և մեկնաբանվում են փաթեթի հետ կապված առաջիկա քայլերը:

Հայաստանի Հանրապետության անտառային ռեսուրսները

Ներկայումս Հայաստանում անտառների պահպանության և վերարտադրության բավական բարդ իրավիճակ է: Տնտեսական և էներգետիկ ճգնաժամի տարիներին (1990-ականներ) անտառը եղել է այն հիմնական բնական ռեսուրսներից մեկը, որը գերշահագործվել է՝ ապահովելու համար բնակչության գոյությունը: Ապօրինի հատումների խնդիրը (ինչն ահռելի չափերի հասավ 90-ական թվականների էներգետիկ ճգնաժամի տարիներին) ցավոք առկա է նաև այսօր, ինչն իր հերթին էլ հանգեցնում է անտառային էկոհամակարգերի դեգրադացմանը:

Հայաստանի Հանրապետությունը լեռնային սակավանտառ երկիր է, որի անտառային ֆոնդն ըստ 1993 թվականին կատարված հաշվառման արդյունքների կազմում է շուրջ 460.000 հա, որից անտառածածկ է 334.100 հա-ը կամ երկրի ողջ տարածքի մոտավորապես 11%-ը: Ցավոք 1993 թվականից մինչ օրս ՀՀ-ում անտառի գույքագրում տեղի չի ունեցել: Սակայն վերջին տարիներին նորարարական տեխնոլոգիաների ու մեթոդների՝ մասնավորապես հեռազննման տվյալների ու ԱՏՀ տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն ընձեռնեց ՀՀ անտառների վերաբերյալ ստանալ նոր, թարմացված տեղեկատվություն: Համաձայն 2011 թվականին ԳՄՀԸ կազմակերպության կողմից հեռահար զոնդավորման եղանակով ստացված տվյալների՝ ՀՀ անտառածածկ մակերեսը կազմում է 332,333 հա, ինչը կազմում է երկրի ընդհանուր տարածքի մոտ 11.17 %-ը (https://un.am/up/file/SDG15-Life-onLand.pdf): Հանրապետության անտառներում հանդիպում են 275 տեսակի ծառեր և թփեր, որոնցից անտառկազմող հիմնական տեսակներն են հաճարենին, կաղնին, բոխին և սոճին:

Վերջերս ՀՀ անտառային ոլորտում տեղի ունեցան որոշ կառուցվածքային փոփոխություններ. նախկինում (մինչ 2018 թվականը) ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն առընթեր գործող անտառկառավարման և անտառային մոնիթորինգն իրագործող կառույցները ներկայումս գտնվում են ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ: Ենթադրվում է, որ սույն փոփոխությունները հնարավորություն կընձեռնեն ներդաշնակեցնելու ՀՀ անտառների կառավարման և մոնիթորինգի համակարգը:

1.1. Հայաստանում ԿԱԿ չափորոշիչների և ցուցանիշների զարգացման գործընթացը

Հայաստանի Հանրապետության կայուն անտառկառավարման չափորոշիչների և ցուցանիշների մշակման և զարգացման գործընթացը սկսվել է 2016 թվականին, երբ ՀՀ-ն ընդգրկվեց «Կովկասում և Կենտրոնական Ասիայում կայուն անտառկառավարման

հաշվետվողականության համակարգ» ծրագրի մասնակիցների ցանկում: 2016 թվականին Հայաստանում տեղի ունեցավ առաջին ռեգիոնալ աշխատաժողովը, որին ներկա էին բոլոր 5 մասնակից երկրների՝ Հայաստան, Վրաստան, Ղազախստան, Ուզբեկստան, Ղրղզստան, ներկայացուցիչները: Աշխատաժողովը հնարավորություն ընձեռնեց երկրներին ներկայացնելու իրենց յուրահատուկ իրավիճակը, շփվել միմյանց հետ և փոխանակվել տեղեկատվությամբ:

Հայաստանում առաջին ազգային ուսումնական աշխատաժողովը տեղի ունեցավ 2017 թվականի սեպտեմբերի 13-ից 15-ը, որտեղ անտառային ոլորտի ավելի քան 30 մասնագետների ջանքերի և ծրագրի աջակցության շնորհիվ ստեղծվեց ՉԱՑ-ի նախնական փաթեթը (http://www.unece.org/index.php?id=45759):

Առաջին ազգային աշխատաժողովին հետևեց Վրաստանում (2018 թվական, փետրվար 13-15) տեղի ունեցած միջանկյալ ռեգիոնալ աշխատաժողովը, որտեղ հավաքվել էին ծրագրի բոլոր 5 մասնակից երկրների ներկայացուցիչները: Աշխատաժողովի ընթացքում հայաստանյան թիմի կողմից ներկայացվեց ՉԱՑ փաթեթի նախագծային տարբերակը:

Միջանկյալ ռեգիոնալ աշխատաժողովի ընթացքում բացահայտված հայաստանյան ՉԱՑ փաթեթի բացերը լրացնելու և այն առավել չափելի և իրագործելի դարձնելու նպատակով 2019 թվականի փետրվարին կազմակերպվեց երկրորդ ազգային աշխատաժողովը (http://www.unece.org/index.php?id=50163), որի արդյունքում այն զգալիորեն բարելավվեց: Աշխատաժողովին քննարկվեցին նաև փաթեթի ինստիտուցիոնալացման հետ կապված հետագա քայլերը:

2. Հայաստանում ԿԱԿ ՉԱՑ երկրորդ ազգային աշխատաժողովի հաշվետվություն

Աշխատաժողովը համախմբել էր մի շարք կազմակերպությունների ավելի քան 30 ազգային փորձագետների՝ քննարկելու, փորձով փոխանակվելու, ինչպես նաև ծրագրելու և ձևակերպելու առաջարկություններ՝ կապված Հայաստանում ԿԱԿ ՉԱՑ փաթեթի հետագա աշխատանքների հետ: Աշխատաժողովի լեզուն անգլերենն ու հայերենն էին՝ թարգմանությամբ: Այն կազմակերպվել էր ՄԱԶԾ (Հայաստան) աջակցությամբ:

Մասնակից փորձագիտական խմբերը 3 օր աշխատեցին «Հայաստանում ԿԱԿ ՉԱՑ» վերնագրով տարաբնույթ խմբային առաջադրանքների վրա: Աշխատաժողովի ֆասիլիտատորը Նատո Կիրվալիձեն էր: Աշխատաժողովը տեղի ունեցավ 2019 թվականի փետրվարի 20-22-ը: Երկրորդ ազգային աշխատաժողովի հետ կապված բոլոր համապատասխան փաստաթղթերը հասանելի են http://www.unece.org/index.php?id=50163 հղմամբ:

Աշխատաժողովը կազմակերպվել էր ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և ՄԱԿ-ի զարգացման հաշվի 2016-2019 թթ. «Կովկասում և Կենտրոնական Ասիայում կայուն անտառկառավարման հաշվետվողականության համակարգ» ներուժի ամրապնդմանն ուղղված ծրագրի շրջանակներում: Ծրագրի մասին հավելյալ տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.unece.org/forests/areas-of-work/capacity-building/unda2016-2019.html

Երկրորդ ազգային աշխատաժողովի նպատակն էր նախորդ մի քանի տարիների ընթացքում մշակված կայուն անտառկառավարման չափորոշիչների և ցուցանիշների նախնական փաթեթի վերանայումը: Այն հնարավորություն ընձեռնեց երկրի ներկայացուցիչներին կիսվել տեղական խորհրդատվությունների արդյունքներով և մանրամասն վերլուծել ՉԱՑ-ի փաթեթը, մշակել տվյալների հավաքման մեթոդները և պլանավորել ազգային ՉԱՑ-ի ինստիտուցիոնալացումը:

Աշխատաժողովը բաղկացած էր 5 միմյանց հետ փոխկապակցված նիստերից, որոնք իրենց մեջ ներառում էին հետևյալ խնդիրները՝

1. Գիտելիքների փոխանակում և քննադատական ակնարկ՝ Վերանայել Հայաստանում կայուն անտառկառավարման ՉԱՑ-ի զարգացման գործընթացը և քաղված դասերը, բացահայտել առանցքային խնդիրները/դժվարությունները և բարելավման նպատակով ներկայացնել կոնկրետ առաջարկություններ: Այլ երկրների օրինակների վերլուծություն:
2. Ցուցանիշների համաձայնեցվածության և ձևակերպման բարելավում՝ Վերացնել թերությունները / կրկնությունները և բարելավել ազգային ՉԱՑ-ի փաթեթի ձևակերպումները:
3. Ցուցանիշների ուսումնասիրություն և առաջնահերթությունների սահմանում՝ Ուսումնասիրություն, առաջնահերթությունների սահմանում և ցուցանիշների ճշգրտում:
4. Տեղեկատվական թերթիկներ և տվյալների հավաքման մեթոդաբանության մշակում՝ Մշակել տեղեկատվական թերթիկներ և ցուցանիշների փաթեթի տվյալների հավաքման ծրագրեր:
5. Պլանավորում՝ Քննարկել ՉԱՑ-ի փաթեթի վերջնականացման և ինստիտուցիոնալացման հիմնական քայլերը և բացահայտել աջակցության կարիքները:

3. Պրեզենտացիաներ

Աշխատաժողովի բացումն իրականացվեց պրն. Այսեր Ղազարյանի (ՀՀ ԲՆ նախարարի տեղակալ) և տկն. Թերեզա Լոեֆֆլերի (ՄԱԿ ԵՏՀ/ՊԳԿ) կողմից: **Պարոն Ղազարյանն** իր խոսքում անդրադարձավ ՀՀ անտառային ոլորտի բարեփոխումներին, կարևորեց ՀՀ ԲՆ անտառային կոմիտեի ձևավորումը, ինչպես նաև շեշտեց Հայաստանում կայուն անտառկառավարման գործընթացն ապահովելու անհրաժեշտության փաստը: Պարոն Ղազարյանը խոսեց նաև աշխատաժողովի կարևորության մասին, ապա, մի քանի գործնական խորհուրդներ տալուց հետո, աշխատաժողովի մասնակիցներին մաղթեց արդյունավետ աշխատանք: Պարոն Ղազարյանը ներկայացրեց իր **«ՀՀ անտառային ոլորտի ընդլայնված բարեփոխումների գործընթացը՝ մոդեռնիզացիոն գործիքակազմի կիրառմամբ»** պրեզենտացիան, խոսեց անտառային ոլորտում օպտիմալացման գործընթացների և բարեփոխումների, անտառների մոնիթորինգում նորարարական տեխնոլոգիաների (ԱՏՀ և ՀԶ) կիրառման և «անտառկառվարման ազգային տեղեկատվական համակարգի» մասին:

Պրն. Ղազարյանն անդրադարձավ նաև ՀՀ անտառային ոլորտի միջազգային հաշվետվողականության թերություններին՝ զուգահեռաբար նշելով բոլոր խնդիրների լուծման ուղիները:

Տիկին Թերեզա Լոեֆֆլերը տրամադրեց ամփոփ տեղեկատվություն **«Կովկասում և Կենտրոնական Ասիայում կայուն անտառկառավարման հաշվետվողականության համակարգ»** ներուժի ամրապնդմանն ուղղված **ծրագրի վերաբերյալ:** Մասնակիցները ծանոթացան ծրագրի թիրախային խմբերի, բյուջեի, ժամանակացույցի և ծրագիրն իրականացնող մարմինների հետ: Նա նշեց, որ ծրագրի նպատակն է հզորացնել մասնակից 5 երկրների (Հայաստան, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան) ազգային ներուժը՝ կայուն անտառկառավարման չափորոշիչներ, ցուցանիշներ և հաշվետվողականության համակարգ զարգացնելու նպատակով: Տիկին Լոեֆֆլերը ներկայացրեց ծրագրի իրականացման գործողությունների պլանը՝ 2016-2019 թվականների համար, մասնավորապես անդրադառնալով առաջին ռեգիոնալ աշխատաժողովին Հայաստանում, երկրորդ ռեգիոնալ աշխատաժողովին Վրաստանում և 2019 թվականի մայիսի 30-ին Իսիկ-Կուլում (Ղրղզստան) կայանալիք «Կովկասի և Կենտրոնական Ասիայի անտառային կոնգրեսին»: Մասնակիցները ծանոթացան ԵՏՀ/ՊԳԿ պաշտոնական կայքին, որտեղ հասանելի են այն հիմնական տեղեկատվությունն ու նյութերը, որոնք կապված են իրականացված, ընթացիկ և սպասվող ծրագրերի հետ: Տիկին Լոեֆֆլերը ներկայացրեց նաև ազգային ԿԱԿ ՉԵՑ փաթեթների մշակման համար նախատեսված ուղեցույցները, խոսեց գլոբալ անտառային ռեսուրսների գնահատման և անտառին առնչվող ցուցանիշների գլոբալ հիմնական փաթեթի մասին, որը ծածկում է ԿԱԿ բոլոր 7 թեմատիկ տարրերը:

Իր պրեզենտացիայի ընթացքում աշխատաժողովի **ֆասիլիտատոր տկն. Նատո Կիրվալիձեն** մասնակիցներին ծանոթացրեց աշխատաժողովի նպատակների, օրակարգի, կանոնների և նորմերի հետ:

Պարոն Անդժեյ Տալարչիկն իր **«Կայուն անտառկառավարման չափորոշիչների և ցուցանիշների հիմունքները»** վերնագիրը կրող պրեզենտացիայում անդրադարձավ կայուն անտառկառավարման և կայուն զարգացման գաղափարներին, ներկայացրեց ՉԵՑ-ի բուն էությունն ու կիրառման պատճառները, ԿԱԿ և տվյալների բուրգի նպատակները, նշելով, որ չափորոշիչներն ու ցուցանիշները քաղաքական գործիքներ են՝ անտառների կայուն կառավարումը գործնականացնելու համար: Նա նաև տրամադրեց տեղեկատվություն Մոնրեալի գործընթացի, «Եվրոպայի անտառներ»-ի և «ՄԱԿ անտառային ֆորում»-ի ցուցանիշների վերաբերյալ: Պարոն Տալարչիկը անդրադարձավ այն 10 հիմնական հարցերին, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ցուցանիշները ձևակերպելուց առաջ, որոնցից են օրինակ՝

- Ի՞նչն է չափվելու տվյալ ցուցանիշով,
- Ի՞նչու է չափվելու,
- Ո՞վ է չափելու ...

Իր պրեզենտացիայի ընթացքում ծրագրի ազգային խորհրդատու **Եվա Դանիելյանը** ներկայացրեց **Հայաստանում կայուն անտառկառավարման չափորոշիչների և ցուցանիշների զարգացման ողջ գործընթացը**: Նա ամփոփեց Հայաստանում իրագործված

բոլոր աշխատանքները՝ ուղղված ՉԱՑ փաթեթի մշակմանը. սկսած առաջին ռեգիոնալ աշխատաժողովից (սեպտեմբեր 2016, երբ մեկնարկեց «Կովկասում և Կենտրոնական Ասիայում կայուն անտառկառավարման հաշվետվողականության համակարգ» ներուժի ամրապնդմանն ուղղված ծրագիրը) մինչ երկրորդ ազգային աշխատաժողով:

Պրեզենտացիայի ընթացքում մասնակիցները ծանոթացան նաև ՉԱՑ-ի նախագծային տարբերակի հետ: Տիկին Դանիելյանը նշեց, որ փաթեթում (որն ընդգրկում է 7 չափորոշիչ և 74 ցուցանիշ) առկա են որոշ խնդիրներ, ինչպիսիք են՝

- կրկնությունները,
- ցուցանիշների անհամապատասխանությունը չափորոշիչներին,
- 4-րդ թեմատիկ տարրին (անտառային ռեսուրսների արտադրողական գործառույթներ) պատկանող ցուցանիշների բացակայությունը:

Տիկին Նատիա Ցխովրեբաձեն (Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարություն) խոսեց **«Ազգային սկզբունքներ, Վրաստանում կայուն անտառկառավարման չափորոշիչներ և ցուցանիշներ»** թեմայի շուրջ: Նա մասնակիցներին ծանոթացրեց Վրաստանի անտառային ռեսուրսների և կայուն անտառկառավարման էկոլոգիական, տնտեսական և սոցիալական սկզբունքների հետ: Ներկայացվեց 2014 թվականին հիմք դրված Վրաստանի ՉԱՑ փաթեթի մշակման ողջ գործընթացը, նշելով, որ Վրաստանի ազգային փաթեթը մշակված է 2 մակարդակների համար՝ «քաղաքականության մակարդակի ՉԱՑ» և «կառավարման մակարդակի ՉԱՑ»:

Տիկին Ցխովրեբաձեն ներկայացրեց ՉԱՑ-ի մշակման հիմնական պատճառները, առանձնացնելով մի քանիսը, օրինակ՝

- անտառկառավարման ազդեցության մոնիթորինգն ու կայունության գնահատումը,
- անտառների վիճակի հաշվետվողականության հիմքերի մատակարարումը,
- ընդհանուր հասկացությունը, թե ինչ են հասկանում կայուն անտառկառավարում ասելով:

Նա խոսեց նաև Վրաստանում «Անտառային տեղեկատվության և մոնիթորինգի համակարգի» մասին, ծանոթացրեց Վրաստանի ազգային ՉԱՑ փաթեթի հետ, որն իր մեջ ընդգրկում էր 3 սկզբունք, 23 չափորոշիչ և 57 ցուցանիշ:

Պարոն Տալարչիկը ներկայացրեց նաև **«ԿԱԿ ՉԱՑ համար տեղեկատվության աղբյուրները և տեղեկատվության կառավարման գործընթացը՝ Լեհաստանի օրինակով»** պրեզենտացիան, որի ընթացքում նա տվեց ընդհանուր տեղեկատվություն Լեհաստանի անտառային ռեսուրսների, 1989 թվականից հետո Լեհաստանում կայուն անտառկառավարման, անտառների և անտառային հողերի կառավարման սկզբունքների և ՉԱՑ փաթեթի ինստիտուցիոնալացման վերաբերյալ: Մասնակիցները ծանոթացան Լեհական անտառային տվյալների բանկին, որը 2010 թվականից ի վեր գնտվում է պրն. Տալարչիկի պատասխանատվության ներքո:

Տիկին Ստեֆանի Լինսերը (Անտառային, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների քաղաքականության ինստիտուտ, Բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարան, Վիեննա) ներկայացրեց իր **«ԿԱԿ ՉԱՑ ազգային փաթեթներ՝ համապատասխան պրեզենտացիա և առնչվող տեղեկատվություն»** վերնագրով

պրեզենտացիան, որտեղ խոսեց ԿԱԿ ՉԵՑ փաթեթների նախաձեռնումից մինչ հաշվետվողականություն ընկած 5 գլխավոր քայլերի մասին: Նա նաև հղում արեց «Եվրոպայի անտառներ»-ի հիմնական փաստաթղթերին, որոնք իրենց մեջ պարունակում են տեղեկատվություն հետևյալ թեմաներով՝

- հիմնավորումներ,
- տեղեկատվության միջազգային մատակարարներ,
- չափման միավորներ,
- տվյալների հասանելիության ներկայիս հաճախականություն,
- հաշվետվողականության նշումներ,
- ցուցանիշների համապատասխան տերմիններ և հասկացություններ:

Նա նաև ներկայացրեց «Եվրոպայի անտառներ»-ի ՉԵՑ փաթեթը, որն իր մեջ ներառում էր 6 չափորոշիչ, 11 որակական և 34 քանական ցուցանիշներ:

Տիկին Լինսերի հաջորդ պրեզենտացիայի ընթացքում մասնակիցները ծանոթացան **տեղեկատվական թերթիկների գաղափարին**: Նա նշեց, որ տեղեկատվական թերթիկների մշակումը շատ լավ տարբերակ է բացահայտելու համար արդյունավետ ցուցանիշի տարրերի պահանջները և դրա հետագա օգտագործման ուղիները: Նշեց նաև, որ դա կօգնի ստուգել ցուցանիշի օգտակարությունը և իրագործելիությունը, ինչի արդյունքում հնարավոր կլինի հասկանալ արդյո՞ք ցուցանիշն ունի վերաձևափոխման կարիք, թե ոչ:

Տիկին Լինսերը ցուցադրեց նաև մի քանի քանակական և որակական ցուցանիշների համար մշակված տեղեկատվական թերթիկների օրինակներ: Բացի այդ, Ստեֆանի Լինսերը տրամադրեց տեղեկատվություն ավստրիական ազգային ՉԵՑ փաթեթի վերաբերյալ, որն իր մեջ ներառում էր 7 չափորոշիչ և 65 ցուցանիշ:

Բոլոր պրեզենտացիաները զուգակցվում էին մասնակիցների և փորձագետների միջև ակտիվ քննարկումներով:

4. Համաձայնեցում և առաջնահերթությունների սահմանում խմբային աշխատանքի արդյունքները

Ողջ աշխատաժողովի ընթացքում մասնակիցները բաժանված էին 3 խմբի՝ հիմնված իրենց փորձագիտական գիտելիքների և հետաքրքրություններ վրա:

Խումբ 1՝ **Անտառային տարածք և վիճակ՝** Չափորոշիչներ **1, 2, 3, 5** (1. Անտառային տարածք, 2. Կենսաբազմազանություն, 3. Անտառի առողջություն, 5. Անտառային ռեսուրսների պաշտպանական գործառույթներ):

Խումբ 2՝ **Սոցիալ-տնտեսական տեսանկյուն՝** Չափորոշիչներ **4 և 6** (4. Անտառային ռեսուրսների արտադրողական գործառույթներ, 6. Անտառային ռեսուրսների սոցիալ-տնտեսական գործառույթներ):

Խումբ 3՝ **Կառավարման տեսանկյուն՝** Չափորոշիչ **7** (Իրավական, քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակ):

2-րդ խմբի աշխատանքն իր մեջ ներառում էր մի շարք բարդություններ, քանի որ 4-րդ թեմատիկ տարրի (անտառային ռեսուրսների արտադրողական գործառույթներ) ցուցանիշները հիմնովին բացակայում էին:

«Համաձայնեցում» նիստի ընթացքում բոլոր երեք խմբերի անդամները ծանոթացան չափորոշիչների և ցուցանիշների փաթեթին, լրացրեցին փաթեթի հիմնական բացերը և փորձեցին վերացնել փաթեթում առկա կրկնությունները: Վարժության ավարտից հետո յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր խմբային աշխատանքի արդյունքները:

«Ցուցանիշների ուսումնասիրություն և առաջնահերթությունների սահմանում» 4-րդ նիստի ընթացքում երեք խմբերի բոլոր անդամները անհատականորեն գնահատեցին ցուցանիշները ըստ հետևյալ չափանիշների (օգտագործվող սանդղակը հետևյալն էր՝ 3 = կատարյալ, 2 = բավարար, 1 = ոչ բավարար) ՝

- համապատասխանություն,
- կոնկրետություն,
- տվյալների/մեթոդների հասանելիություն,
- իրագործելիություն

Այնուհետև յուրաքանչյուր ցուցանիշի համար ամփոփվեցին անհատական գնահատականները, ինչն օգնեց մասնակիցներին երևան հանել ՉԼՑ փաթեթի հիմնական խնդիրները: Ստորև ներկայացված գրաֆիկը ցույց է տալիս 2-րդ խմբի 4-րդ թեմատիկ տարրի համար առաջնահերթությունների գնահատման ընդհանուր միավորները, ինչը և օգնեց նրանց հայտնաբերել ամենախնդրահարույց ցուցանիշները: Նշված գործողությունն իրականացվել է նաև այլ թեմատիկ տարրերի ցուցանիշների համար:



Գնահատումից անմիջապես հետո խմբերի անդամները վարկանիշային աղյուսակից ընտրեցին 3 առաջնահերթ ցուցանիշներ, որոնք սքրինինգի ստուգման ցուցակի կիրառմամբ անցան սքրինինգ և ճշգրտում:

Սքրինինգի ստուգման ցուցակ (օրինակ)

Ցուցանիշ՝				
6.10 Ընդհանուր և մեկ շնչին բաժին ընկնող ոչ բնափայտային շուկայական արտադրանքի սպառումը	Այո (նշել ստորև)	Գուցե (նշել ստորև)	Ոչ (նշել ստորև)	Մեկնաբանություն/ հիմնավորում/ ապացույց (անգամ այո-ի դեպքում)
1. Համապատասխանություն՝ Արդյո՞ք ցուցանիշը և այն տեղեկատվությունը, որն այն իրենից ենթադրում է իրոք էական են ազգային համատեքստում ԿԱԿ-ը գնահատելու համար:		✓		
	Շարժվել ստորին տող	Ձևափոխել առավել համապատասխան դարձնելու նպատակով	Բացառել	
2. Կոնկրետություն՝ Արդյոք ցուցանիշը բավականաչափ պարզ է այն համատեքստում, թե ի՞նչ պետք է չափվի և ինչպե՞ս:	✓			
	Շարժվել ստորին տող	Ձևափոխել առավել համապատասխան դարձնելու նպատակով	Բացառել	

Ցուցանիշ՝				
6.10 Ընդհանուր և մեկ շնչին բաժին ընկնող ոչ բնափայտային շուկայական արտադրանքի սպառումը	Այո (նշել ստորև)	Գուցե (նշել ստորև)	Ոչ (նշել ստորև)	Մեկնաբանություն/ հիմնավորում/ ապացույց (անգամ այո-ի դեպքում)
3. Մեթոդների և տվյալների հասանելիություն՝ արդյո՞ք տեղեկատվության ստացման մեթոդները և համապատասխան տեղեկատվությունը հեշտորեն հասանելի են ազգային համատեքստում			✓	
	Շարժվել ստորին տող	Ձևափոխել տեղեկատվական կարիքները հասանելի դարձնելու նպատակով	Բացառել	
4. Իրագործելիություն՝ Արդյո՞ք առկա են համապատասխան ռեսուրսներն ու ներուժը՝ չափումները պարբերաբար կատարելու համար:			✓	
	Շարժվել ստորին տող	Ձևափոխել առավել իրագործելի դարձնելու նպատակով	Բացառել	



Ազգային ՀԼՑ փաթեթի քննադատական ակնարկ



Առաջնահերթությունների սահմանում, անհատական գնահատում

Աշխատանքային գործընթաց

5. Տեղեկատվական թերթիկների մշակում և տվյալների հավաքման մեթոդաբանություն

5-րդ նիստի ընթացքում յուրաքանչյուր խումբ լրացրեց տեղեկատվական թերթիկներ՝ հաջողությամբ սքրինինգն անցած 3 ցուցանիշների համար: Սույն վարժության նպատակն էր մշակել և հստակեցնել կոնկրետ ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, կառավարման և օգտագործման ուղիները: Վարժությունն օգնեց զարգացնել ամբողջական տեղեկատվական համակարգ այն ցուցանիշների վերաբերյալ, որոնք ներդրվելու և ինստիտուցիոնալացվելու են:

Տեղեկատվական թերթիկների որոշ օրինակներ ներկայացված են ստորև՝

Չափորոշիչ՝ Իրավական, քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակ	
Ցուցանիշի համարը՝ 1.3	Ցուցանիշի կարճ անվանումը՝ Անտառկառավարման պլաններ Ցուցանիշի ամբողջական անվանումը՝ Անտառների և անտառային հողերի մասնաբաժինը, որոնք ունեն անտառկառավարման պլան
Հիմնավորում՝ Ո՞րն է տվյալ ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակը: Ինչպե՞ս կօգտագործվի այս տեղեկատվությունը՝ կայուն անտառկառավարման առաջխաղացման համար: Այն կարող է հանդիսանալ կայուն կառավարման հիմք՝ միջոցառումների և գործողությունների երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման համար	
Տվյալների աղբյուրը և տվյալներ տրամադրողը՝ Պետական կառավարման համակարգ	
Չափման միավոր և չափման պահանջվող հաճախականություն՝ %, տարեկան	
Նշումներ՝ հաշվետվողականության համար (օրինակ առանձին թվեր՝ հաշվետվողականության համար): հա, անտառտնտեսությունների և անտառային ԲՀՊՏ-ների թիվը	
Տվյալ ցուցանիշի քաղաքական թիրախները և/կամ շեմերը (կարող են նաև կախված լինել ժամանակից)՝ 100%,	
Ինստիտուցիոնալ դերեր և պարտականություններ՝ ո՞ր հաստատություններն են հավաքագրելու, կառավարելու և օգտագործելու տվյալները: Փորձեք լրացնել առկա իրավիճակի հիման վրա: Տվյալների հավաքագրում և կառավարում՝ պետական կառավարման մարմիններ, Տվյալների օգտագործում՝ պետական, համայնքային, հասարակական և այլ շահագրգիռ կողմեր	
«Եվրոպայի անտառների բառարան»-ում հասանելի մերձակա սահմանումներ՝ -	Տերմիններ, որոնք դեռևս սահմանման կարիք ունեն՝ -
Այս ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության և հաշվետվողականության հետ կապված խնդիրներ՝ Անտառի ազգային գույքագրում և հաշվառման տվյալների բացակայություն	
Առաջարկություններ՝ նշված խնդիրները լուծելու համար՝ Անհրաժեշտ է անտառի ազգային գույքագրում և հաշվառում	

Չափորոշիչ՝ Անտառային ռեսուրսների սոցիալ-տնտեսական գործառույթներ

Ցուցանիշի համարը՝ 6.1	Ցուցանիշի ամբողջական անվանումը՝ Փայտանյութի և փայտից ստացվող արտադրանքի ներմուծման և արտահանման ծավալ
Հիմնավորում՝ Ո՞րն է տվյալ ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակը: Ինչպե՞ս կօգտագործվի այս տեղեկատվությունը՝ կայուն անտառկառավարման առաջխաղացման համար: Ապօրինի հատումները կառավարելու մեխանիզմ:	
Տվյալների աղբյուրը և տվյալներ տրամադրողը՝ ՀՀ մաքսային ծառայություն	
Չափման միավոր և չափման պահանջվող հաճախականություն՝ Չափման միավոր՝ հատ, մ³ կամ դրան համարժեք այլ միավոր Հաճախականություն՝ տարեկան	
Նշումներ՝ հաշվետվողականության համար (օրինակ առանձին թվեր՝ հաշվետվողականության համար):	
Տվյալ ցուցանիշի քաղաքական թիրախները և/կամ շեմերը (կարող են նաև կախված լինել ժամանակից)՝ Խրախուսել տեղում փայտանյութի վերամշակումը և պատրաստի արտադրանքի արտահանումը	
Ինստիտուցիոնալ դերեր և պարտականություններ՝ ո՞ր հաստատություններն են հավաքագրելու, կառավարելու և օգտագործելու տվյալները: Փորձեք լրացնել առկա իրավիճակի հիման վրա: Տվյալների հավաքագրում՝ ՀՀ մաքսային ծառայություն, ՀՀ ԲՆ անտառային կոմիտե Կառավարում՝ ՀՀ ԲՆ (անտառային կոմիտե, «Հայանտառ» ՊՈԱԿ) Օգտագործողներ՝ Ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն	
«Եվրոպայի անտառների բառարան»-ում հասանելի մերձակա սահմանումներ՝ -	Տերմիններ, որոնք դեռևս սահմանման կարիք ունեն՝ -
Այս ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության և հաշվետվողականության հետ կապված խնդիրներ՝ Ապօրինի արտահանում և ներմուծում	
Առաջարկություններ՝ նշված խնդիրները լուծելու համար՝ Փայտանյութի մշակման, ներմուծման և արտահանման կազմակերպությունների օրինականացում	

Չափորոշիչ՝ Անտառային տարածք	
Ցուցանիշի համարը՝ 1.5	Ցուցանիշի ամբողջական անվանումը՝ Անտառի մակերեսի պատճառաբանված փոփոխություն
Հիմնավորում՝ Ո՞րն է տվյալ ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակը: Ինչպե՞ս կօգտագործվի այս տեղեկատվությունը՝ կայուն անտառկառավարման առաջխաղացման համար: Փոփոխությունները տվյալ տարածքներում ցույց կտան անտառկառավարման գործընթացի կայունությունը:	
Տվյալների աղբյուրը և տվյալներ տրամադրողը՝ • Անտառկառավարման պլաններ, • Անտառի ազգային գույքագրում, • Անտառների մոնիթորինգի պետական համակարգ	
Չափման միավոր և չափման պահանջվող հաճախականություն՝ հա, անտառկառավարման պլաններ – 10 տարի հաճախականությամբ, անտառի ազգային գույքագրում՝ 5 տարին մեկ անգամ	
Նշումներ՝ հաշվետվողականության համար (օրինակ առանձին թվեր՝ հաշվետվողականության համար): Պահպանվող անտառային տարածքները սահմանված են համաձայն այլ օրենսդրական և կարգավորիչ փաստաթղթերի	
Տվյալ ցուցանիշի քաղաքական թիրախները և/կամ շեմերը (կարող են նաև կախված լինել ժամանակից)՝ Համաձայն 2005 թվականին ընդունված անտառի ազգային ծրագրի, մինչ 2050 թվականն ընկած ժամանակահատվածը առաջարկվել է ՀՀ անտառածածկի մակերեսը դարձնել 20,1%:	
Ինստիտուցիոնալ դերեր և պարտականություններ՝ ո՞ր հաստատություններն են հավաքագրելու, կառավարելու և օգտագործելու տվյալները: Փորձեք լրացնել առկա իրավիճակի հիման վրա: -	
«Եվրոպայի անտառների բառարան»-ում հասանելի մերձակա սահմանումներ՝ -	Տերմիններ, որոնք դեռևս սահմանման կարիք ունեն՝ -
Այս ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության և հաշվետվողականության հետ կապված խնդիրներ՝ -	
Առաջարկություններ՝ նշված խնդիրները լուծելու համար՝ -	

6. ԿԱԿ չափորոշիչների և ցուցանիշների վերջնական ազգային փաթեթ

Չափորոշիչ 1 ՝ **Անտառային տարածք**

1.1 Անտառի և այլ անտառածածկ տարածքների մակերեսը
1.2 Անտառի և այլ անտառածածկ տարածքների մասնաբաժինը երկրի տարածքի ընդհանուր մակերեսում
1.3 ԱԿՊ-ներով կառավարվող անտառի մակերեսը
1.4 Պաշտպանական, հատուկ և արտադրական նշանակության անտառների մակերես
1.5 Անտառի մակերեսը ԲՀՊՏ-ներում
1.6 Բնական և արհեստական անտառվերականգնում և անտառապատում (մակերես)
1.7 Անտառի և այլ անտառածածկ տարածքների բաշխվածությունն ըստ հասակային դասերի
1.8 Անտառային ածխածնի հաշվեկշիռն ըստ անտառների տիպերի
1.9 Դեգրադացված անտառների մակերես

Չափորոշիչ 2 ՝ **Կենսաբազմազանություն**

2.1 Բնապահպանական բարձրարժեք անտառների մակերեսը
2.2 Տեսակային բազմազանություն (բազմազանության ինդեքս)
2.3 Էնդեմիկ տեսակների խտությունը
2.4 Ինվազիվ տեսակների զբաղեցրած տարածքը և խտությունը
2.5 Ըստ ԲՊՄՄ կարմիր ցուցակի կատեգորիների դասակարգված վտանգված տեսակների քանակը անտառային տեսակների ընդհանուր թվաքանակի նկատմամբ
2.6 Անտառի ֆրագմենտացիա (ֆրագմենտների մակերես և քանակ)

Չափորոշիչ 3 ՝ **Անտառի առողջություն**

3.1 Հրդեհների, վնասատուների, հիվանդությունների արդյունքում վնասված անտառների մակերեսը
3.2 Անմիջականորեն մարդածին գործունեության արդյունքում վնասված անտառների մակերեսը (հատումներ, հրդեհներ, անտառանյութի մթերում, հանքարդյունաբերություն, այլ տնտեսական գործունեություններ՝ որոնք չեն անցել ՇՄԱԳ փորձաքննություն)

Չափորոշիչ 4 ՝ **Անտառային ռեսուրսների արտադրողական գործառույթներ**

4.1 Անտառի տարեկան բացարձակ վերաճ

4.2 Կայուն կառավարման վրա հիմնված փայտանյութի տարեկան արտադրություն

4.3 Փայտանութի տարեկան ընդհանուր մթերումը և մթերման մակերեսը, այդ թվում շինափայտ և վառելափայտ

Չափորոշիչ 5 ՝**Անտառի պաշտպանական գործառույթներ**

5.1 Հողապաշտպան և ջրապաշտպան անտառների մակերեսը և տոկոսն ընդհանուր անտառածածկում

5.2 Անտառածածկի մակերեսը ջրհավաք ավազանում

Չափորոշիչ 6 ՝ **Անտառային ռեսուրսների սոցիալ-տնտեսական գործառույթներ**

6.1 Բնափայտի և դրանից ստացվող արտադրանքի ներմուծման և արտահանման ծավալ

6.2 Անտառային տնտեսությունների շահույթ

6.3 Անտառային ոլորտում աշխատողների թվաքանակը դասակարգված ըստ սեռի, տարիքային խմբերի և մասնագիտական կրթության

6.4 Անտառային ոլորտում աշխատուժի կարողությունների զարգացում

6.5 Անտառային ոլորտում աշխատողների միջին աշխատավարձը

6.6 Անտառամերձ համայնքների բնապահպանական իրազեկում

6.7 Անտառկառավարման ծախսերի և օգուտների համաչափ բաշխման մեխանիզմներ

6.8 Ոչ բնափայտային շուկայական արտադրանքի տարեկան սպառումը

6.9 Անտառներից և այլ անտառային հողերից ստացվող վճարովի ծառայությունների արժեք

6.10 Անտառի աշխատողների առողջության և անվտանգության ապահովման ընթացակարգեր

Չափորոշիչ 7 ՝ **Իրավական, քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակ**

7.1 Անտառային քաղաքականության և անտառի ազգային ծրագրի առկայություն

7.2 Անտառային մոնիտորինգի տարեկան ծրագրերի և հաշվետվությունների առկայություն

7.3 Անտառածածկի ընդլայնման գործողությունների պլանի առկայություն

7.4 Կայուն անտառկառավարմանն աջակցող օրենսդրություն և կանոնակարգեր

7.5 Միջազգային պարտավորությունների կատարման և հաշվետվողականության համակարգի առկայություն

7.6 Հասարակության մասնակցությունն իրավական ակտերի նախագծերի քննարկմանը

7.7 Կայուն անտառկառավարման օրենսդրության կիրառում

7.8 Կայուն անտառկառավարմանն ուղղված պետական, միջազգային և այլ ֆինանսավորում

7.9 Կայուն կառավարմանը նպաստող հարկային, ֆինանսական և տնտեսական գործիքներ

7.10 Անտառկառավարման ազգային տեղեկատվական համակարգ

7.11 Անտառների և անտառային հողերի կադաստրի համակարգի առկայություն

7.12 Անտառի գիտահետազոտական ծրագրեր (քանակ)

7.13 Ջերմոցային գազերի գույքագրման երկամյա հաշվետվություններ

7.14 Կայուն անտառկառավարմանը նպաստող կատարելագործված և նոր տեխնոլոգիաներ (քանակ)

7. Առաջիկա քայլեր և աջակցության հետագա կարիքների բացահայտում

Հայաստանի ՉԱՑ փաթեթի հետագա զարգացման գործողությունների թարմացված ծրագիր:

Աշխատաժողովի «Ամփոփում և հետագա քայլերի պլանավորում» նիստի ընթացքում պրն. Արթուր Պետրոսյանը (ՀՀ ԲՆ Կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչության պետ) նշեց, որ ծրագիրը կունենա իր տրամաբանական շարունակությունը: Ծրագրի աշխատաժողովների արդյունքում մշակված ՉԱՑ փաթեթը կներկայացվի բնապահպանության նախարարության համապատասխան վարչությանը, ինչից հետո կստեղծվի համապատասխան աշխատանքային խումբ: Աշխատանքների վերջնարդյունքը կլինի այն, որ Հայաստանն ի վերջո ձեռք կբերի վերջնական ՉԱՑ-ի փաթեթ:

Գործողություններ	Ովքե՞ր են մասնակցելու	Ժամանակահատված
Աշխատանքային խմբի ստեղծում	ՀՀ ԲՆ Կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչություն	Մայիս 2019
Նախնական ՉԱՑ փաթեթի վերջնականացում	ՀՀ ԲՆ Կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչություն	-

Հավելված I. «Հայաստանում կայուն անտառկառավարման չափորոշիչներ և ցուցանիշներ» երկրորդ ազգային աշխատաժողովի օրակարգ

	Փետրվարի 20, չորեքշաբթի	Փետրվարի 21, հինգշաբթի	Փետրվարի 22, ուրբաթ
	Մասնակիցների գրանցում 9.15 **Աշխատաժողովի մեկնարկ 9.30** I. Նախապատրաստական աշխատանքներ 1.1 Ողջույնի խոսք և բացում ○ ***Պրն. Այսեր Ղազարյան**, ՀՀ Բնապահպանության նախարարություն, նախարարի տեղակալ* ○ ***Տկն. Թերեզա Լոեֆֆլեր**, ՄԱԿ ԵՏՀ/ՊԳԿ*: 1.2 Ծրագրի ակնարկ, **Տկն. Թերեզա Լոեֆֆլեր, ՄԱԿ ԵՏՀ/ՊԳԿ,** պրեզենտացիա 1.3 Մասնակիցների, աշխատաժողովի նպատակների, օրակարգի, կանոնների և նորմերի ներկայացում, **Տկն. Նատո Կիրվալիձե** *(ֆասիլիտատոր):*	**Աշխատաժողովի մեկնարկ 9.30** Նախորդ օրվա նյութերի վերանայում IV. Ցուցանիշների ուսումնասիրություն և առաջնահերթությունների սահմանում 4.1 «Որոշումների ծառ» մեթոդի օգտագործում, ցուցանիշների ուսումնասիրություն, առաջնահերթությունների սահմանում և ճշգրտում. *Խմբային աշխատանք:*	**Աշխատաժողովի մեկնարկ 9.30** Նախորդ օրվա նյութերի վերանայում VI. Ազգային ՁԱՑ -ի թարմացված տարբերակի բարելավում 6.1 Ստացված խորհուրդները և քաղված դասերը հաշվի առնելով ՁԱՑ -ի թարմացված տարբերակի մշակում. *Խմբային աշխատանք.*
	Ընդմիջում 11.00 - 11.30	Ընդմիջում 11.00 - 11.30	Ընդմիջում 11.00 - 11.30
	II. Գիտելիքների փոխանակում. Ազգային ՁԱՑ քննադատական ակնարկ և օրինակների վերլուծություն 2.1 ԿԱԿ ՁԱՑ-ի նախադրյալների և սահմանումների հակիրճ ներկայացում. **Պրն. Անդժեյ Տալարչիկ**, պրեզենտացիա, ՀՈՊ 2.2 Ազգային ՁԱՑ-ի զարգացման գործընթացի և Հայաստանյան ծրագրի թիմի կողմից մշակված ՁԱՑ-ի նախնական փաթեթի ներկայացում. **Տկն. Եվա**	V. Վերաձևակերպում, տեղեկատվական թերթիկներ և տվյալների հավաքման մեթոդաբանության մշակում 5.1 ԿԱԿ ՁԱՑ-ի ազգային փաթեթներ. համապատասխան տեղեկատվության ներկայացում, **Տկն. Ստեֆանի Լինսեր,** պրեզենտացիա, ՀՈՊ 5.2 Ցուցանիշների ցանկի վերաձևակերպում՝ այն առավել	6.1 Նախորդ նիստի շարունակություն. Ստացված խորհուրդները և քաղված դասերը հաշվի առնելով ՁԱՑ -ի թարմացված տարբերակի մշակում. Խմբային աշխատանք

Դանիելյան, Հայաստանում ծրագրի համակարգող 2.3 Ազգային ՉԼՑ քննադատական ակնարկ. *Խմբային աշխատանք և վարժություն.*	կոնկրետ և նպատակաուղղված դարձնելու նպատակով. *Խմբային աշխատանք և պրեզենտացիա.*	
Ճաշի ընդմիջում 13.00 - 14.00	Ճաշի ընդմիջում 13.00 - 14.00	Ճաշի ընդմիջում 13.00 - 14.00
2.4 Օրինակների վերլուծություն՝ Ազգային ՉԼՑ-ի մշակման գործընթացը Վրաստանում, **Տկն. Նատիա Ցիխովրեբաձե,** Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարություն. Պրեզենտացիա, ՀուՊ III. Համաձայնեցում 3.1 Ազգային ՉԼՑ -ի համաձայնեցվածության բարելավում. *Խմբային աշխատանք.*	5.3 Տվյալների աղբյուրներ և ԿԱԿ ՉԼՑ-ի փաթեթի տեղեկատվության կառավարման գործընթաց՝ Լեհաստանի օրինակով, **Պրն. Անդժեյ Տալարչիկ**, պրեզենտացիա, ՀուՊ 5.4 Տեղեկատվական թերթիկներ և ցուցանիշների ցանկի համար տվյալների հավաքման ուղիներ. *Խմբային աշխատանք.*	6.2 Մշակված ՉԼՑ-ի ներկայացում և այնպիսի չափորոշիչների փորձագիտական գնահատում, ինչպիսիք են համապատասխանությունը, իրագործելիությունը և այլն. Պրեզենտացիա՝ փորձագիտական վերանայում վարժության հետ համատեղ. VII. Ամփոփում և հետագա քայլերի պլանավորում 7.1 ՉԼՑ-ի մշակման գործընթացի հետագա քայլերի ամփոփում և ինստիտուցիոնալացում. *Խմբային վարժություն.*
Ընդմիջում 15.30 - 16.00	Ընդմիջում 15.30 - 16.00	Ընդմիջում 15.30 - 16.00
3.1 Նախորդ նիստի շարունակություն. Քաղված դասերի վերանայման թիմի հանդիպում.	5.4 Նախորդ նիստի շարունակություն. Քաղված դասերի վերանայման թիմի հանդիպում.	VII. Ամփոփում և հետագա քայլերի պլանավորում 7.2 Աշխատաժողովի գնահատում և եզրափակիչ խոսք
Ավարտ 17.30	Ավարտ 17.30	Ավարտ 17.30

Հավելված II. Մասնակիցների ցանկ

Մասնակիցների ցանկ

«Հայաստանում կայուն անտառկառավարման չափորոշիչներ և ցուցանիշներ» երկրորդ ազգային աշխատաժողով

Սկիզբ՝ Չորեքշաբթի, Փետրվար 20, 2019 թ

Ավարտ՝ Ուրբաթ, Փետրվար 22, 2019 թ

Մասնակիցներ՝ 35

Ազգանուն	Անուն	Կոչում	Կազմակերպություն	Երկիր
Աղաբաբյան	Կարեն	Պրն.	Հայաստանի ամերիկյան համալսարան	Հայաստան
Ալեքսանյան	Ալլա	Պրն..	Հայաստանի ազգային ագրարային համալսարան	Հայաստան
Ամիրյան	Գագիկ	Պրն..	«Հայկական կանաչ խաչ» ՀԿ	Հայաստան
Ավագյան	Արման	Պրն.	ՀՀ ԲՆ «Անտառային մոնիրթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	Հայաստան
Ավետիսյան	Գորիկ	Պրն.	ՀՀ ԲՆ «Զիկատար» ՊՈԱԿ	Հայաստան
Դանիելյան	Եվա	Տկն.	ՄԱԿ ԵՏՀ/ՊԳԿ, ԶՀ ծրագիր	Հայաստան
Դանիելյան	Տատյանա	Տկն.	ՀՀ ԳԱԱ, Բուսաբանության ինստիտուտ	Հայաստան
Դարչինյան	Հասմիկ	Տկն.	Լոռու մարզպետարան, գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն	Հայաստան

Գաբրիելյան	Արամ	Պրն.	«Խազեր» ՀԿ	Հայաստան
Գալստյան	Սիրանուշ	Տկն.	«Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագիր, Հայաստան, ԳՄՀԸ	Հայաստան
Գևորգյան	Սամվել	Պրն.	Տավուշի մարզպետարան	Հայաստան
Գևորգյան	Արմեն	Պրն.	«Լեռնային ռեգիոնների կայուն զարգացման կովկասյան ցանց» ծրագիր	Հայաստան
Գևորգյան	Արթուր	Պրն.	Անկախ փորձագետ	Հայաստան
Ղազարյան	Այսեր	Պրն.	ՀՀ ԲՆ	Հայաստան
Գրիգորյան	Ատոմ	Պրն.	ՀՀ ԲՆ«Անտառային մոնիրթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	Հայաստան
Գյուլխասյան	Արամ	Պրն.	ՀՀ ԲՆ «Անտառային մոնիրթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	Հայաստան
Համբարձումյան	Անի	Տկն.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	Հայաստան
Հարությունյան	Նունե	Տկն.	«Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն», Հայաստան	Հայաստան
Հարությունյան	Ագապի	Տկն.	ՊԳԿ տար.	Հայաստան
Կիրվալիձե	Նատո	Տկն.	ՄԱԿ ԵՏՀ/ՊԳԿ, ՁՀ ծրագրի ռեգիոնալ համակարգող	
Լոեֆֆլեր	Թերեզա	Տկն.	ՄԱԿ եվրոպական տնտեսական հանձնաժողով	
Մարտիրոսյան	Վահե	Պրն.	Հայաստան ծառատունկ	Հայաստան

			ծրագիր	
Մարտիրոսյան	Վլադիկ	Պրն.	«Խուստուփ» ՀԿ	Հայաստան
Մացակյան	Վահե	Պրն.	ՀՀ ԲՆ, անտառային կոմիտե	Հայաստան
Մելիքյան	Վարդան	Պրն.	ՄԱԶԾ, Հայաստան	Հայաստան
Մնացյան	Աղասի	Պրն.	«Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագիր, Հայաստան, ԳՄՀԸ	Հայաստան
Պետրոսյան	Արթուր	Պրն.	ՀՀ ԲՆ, Կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչություն	Հայաստան
Սահակյան	Դշխուհի	Տկն.	«Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն», Հայաստան	Հայաստան
Սահակյան	Սամվել	Պրն.	ՀՀ ԲՆ, անտառային կոմիտե	Հայաստան
Սահակյան	Արամ	Պրն.	ՀՀ ԲՆ, Կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչություն	Հայաստան
Սահակյան	Մերի	Տկն.	ՄԱԿ ՊԳԿ, Հայաստան	Հայաստան
Սարգսյան	Արմինե	Տկն.	ՀՀ ԲՆ, Կենսաբազմազանության և անտառային քաղաքականության վարչություն	Հայաստան
Սայադյան	Հովիկ	Պրն.	ՄԱԶԾ, Հայաստան	Հայաստան
Տալարչիկ	Անդժեյ	Պրն.	Անտառների կառավարման և գեոդեզիայի բյուրո	Լեհաստան

Ցխովրեբաձե	Նատիա	Տկն.	Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարություն	Վրաստան